տաւորների մի մեծ բանակ լինէր, որ խմբոած է լինում մի վանքի շուրջը, եւ ամէնքը վառոած են լինում կրօնական ջերմեռանդութեամբ, ամէնքի սրտերը փափկանում են, եւ ամէնքի մէջ զարթնում է ընդհանուր կարեկցական ոգին, մինը միւսին օգնելու, մինը միւսին բարիք գործելու: Այստեղ եւս ես նկատում էի մի տեսակ միութիւն, մի տեսակ եղբայրութիւն, մի տեսակ հաւասարութիւն բոլորի մէջ: Աւելի ունեւորները հրաւիրում էին իրանց սեղանի մօտ աղքատ ուղեկիցներին: Նրանք խղճի դէմ էին համարում միայնակ վայելել այն բարիքը, երբ մի ուրիշը հեռոից կարօտութեամբ նայում է: Քարաւանը միացրել էր բոլորին եւ տարբեր, այլասեռ տարրերից կազմել էր մի մեծ ընտանիք:

Քարաւանի մէջ կազմոեցան եւ կանանոցնէր: Կանայք առանձին մի կողմն էին մեկուսացած եւ նրանց հասարակութիւնը բաժանոած էր տղամարդերից: Քարաւանի պետը սկզբից այդ մասին հոգացել էր եւ կարգի էր դրել յարեմի բոլոր պարտ ու պատշաճ պահանջները: Նա միմեանց վրայ դարսած հակերից կազմել էր մի շրջապատ, որի մէջ զետեղոած էին կանայք եւ ամենեւին չէին երեւում: Հարուստները իրանց հետ վրաններ ունէին, որոնք այնպէս էին պատրաստոած, որ թէ տղամարդերի համար եւ թէ կանանց համար առանձին բաժիններ կային:

Քարաւանի մէջ կային երգիչներ, մօլլաներ, դերվիշներ, մի աշուղ եւ ցիգաններ, որոնք գնում էին զանազան քաղաքներ: Այստեղ, քարաւանի սովորութեամբ, նրանք, առանց որեւիցէ նիւթական ակնկալութեան, զուարճացնում էին իրանց ուղեկիցներին: Իւրաքանչիւրը գտել էր իր սիրող հասարակութիւնը: Մի տեղ կրօնասէր, ծանրաբարոյ Էֆենդին լսում էր մօլլայի զրոյցները նախկին խալիֆաների եւ իմամների հրաշքների ու գործերի մասին: Մի տեղ դերվիշը, արեւելքի փիլիսոփան, նստած իրանից անբաժան ընծու մորթիի վրայ, զբաղեցնում էր իր ունկնդիրներին զանազան իմաստասիրական հարցերով: Մի տեղ աշուղը դեռ նոր էր սկսել մի վէպ, ոգեւորոած պատմում էր եւ պիտի շարունակէր պատմել ամէն իջեւաններում, մինչեւ կը վերջացնէր: Աւելի երիտասարդները, քարաւանի բանակից դուրս առանձնացած, լսում էին ցիգանների երգը ու նրանց նոագածութիւնները: Իսկ հեռու, ամէնից հեռու, լսելի էր լինում արածացող ջորիների զանգակների հնչիւնը եւ նրանց վրայ հսկող ծառաների երգը: Բայց մօտից, շատ մօտից, երգում էր Անգղ գետը իր մեղմ, քաղցրաձայն խոխոջմունքով: Գիշերային լռութեան մէջ այդ բոլորը, միախառնոելով, կազմում էին խիստ ախորժ, սրտաշարժ ներդաշնակութիւն: